ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ (ՄԱՔՐՈՂ ՆՅՈՒԹԵՐ) ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ N ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-18/33-5 ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 01 10 2018թ.

Արտակարգ իրավիճակների նախարարությունը ի դեմս գլխավոր քարտուղար Վ.Օհանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<Էքսպրես Շին>>ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Զ.Եղիազարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

Համաձայնագրի առարկան

1. Նկատի ունենալով, որ Ֆինանսների նախարարությունից ստացված 22.06.2018թ. թիվ 03/26-1/11320-18 գրությամբ Արտակարգ իրավիճակների նախարարության կողմից կազմակերպված գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում <<Էքսպրես Շին>>ՍՊԸ -ի հետ 11.06.2018թ կնքված տնտեսական ապրանքների (մաքրող նյութեր) մատուցման պայմանագիրը, այսուհետ «Պայմանագիր», դրական եզրակացություն չի ստացել և հիմք ընդունելով 28.09.2018թ. կողմերի միջև կնքված N 1 համաձայնագիրը՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին.

1.1 ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն լուծել ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-18/33-5 ծածկագրով գնման Պայմանագիրը:

1.2 Պայմանագիրը լուծելու պահից դադարեցնել կողմերի պարտավորությունները:

2. Համաձայնագիրը կազմված է մեկ թերթից, կնքված է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Համաձայնագրի հետ կապված կողմերի իրավահարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրության համաձայն:

4. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Արտակարգ իրավիճակների նախարարություն	<<Էքսպրես Շին >> ՍՊԸ
ք. Երևան, Դավիթաշեն 4, Ա.Մինոյան փող. 109/8	Արմավիրի մարզ գ.Բամբակաշատ 14/1 տ3
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«ՀայԲիզնեսբանկ»ՓԲԸ
Հ/Հ 900011019313	Հ/Հ 11500431918819
ՀՎՀՀ 00153247	ՀՎՀՀ 04423377
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
Վ.Օհանյան	Զ.Եղիազարյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.